



AUA MANOOGIAN SIMONE
RESEARCH FUND (MSRF)



Հանրային հաղորդակցության միջոցով
կորոնավիրուսային համավարակի
ընթացքում հակահամաճարակային
կանոնների պահպանման խթանում

Հետազոտության հակիրճ հաշվետվություն

Եվգենյա Պատուրյան
Նվարդ Գրիգորյան
Միկա Հիլսոն
Բրայան Էլիսոն
Հովսեփ Կանադյան
Միքայել Ավետիսյան
Մերի Կարապետյան
Հռիփսիմե Լպուտյան
Սարա Մելքոնյան

ԵՐԵՎԱՆ
2020

Ներածություն

- ԶՈՎԻԴ-19 համավարակը աննախադեպ մարտահրավեր էր ամբողջ աշխարհի համար: Բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներ կանգնեցին հասարակական առողջությանը և տնտեսությանը հասցված վնասները վերականգնելու խնդրի առաջ: Այն երկրները, որոնք **Նախկինում ունեցել էին մեծ համավարակներ կամ համաճարակներ հաղթահարելու** փորձառություն, ավելի պատրաստված էին, քան մնացածները:
- Համավարակը համեմատաբար հաջողությամբ հաղթահարելու գործընթացը բազմաթիվ գործոններից է կախված: Վարչակարգի տեսակը (Ժողովրդավարություն կամ ավտորիտարիզմ) Եսկան չէ: Մարտահրավերին հաջողությամբ դիմակայելը կախված է ինչպես **գործող պետական կառույցներից** և **կառավարության գործունեությունից**, այնպես էլ **տվյալ մշակույթում տարածված արժեքներից**:
- Չնայած համավարակի հետ կապված ապատեղեկատվությունը շարունակում է լուրջ խնդիր հանդիսանալ, հետազոտությունների մեծ մասը նշում է անվտանգության մի շարք կանոններ, որոնք այս պահին դարձել են համավարակին արձագանքելու հիմնական միջոցները:

ԶՈՎԻԴ-19 համավարակի միջազգային լավագույն փորձը և դեպքերի ուսումնասիրությունը

- **Դիմակները** պետք է մշտապես կրել **մյուսներին** պաշտպանելու համար:
- Մշտապես պետք է առնվազն 1,5-2 մետր **սոցիալական հեռավորություն** պահպանել:
- Մարդիկ պետք է **խուսափեն վատ օդափոխվող փակ տարածքներում**, մարդաշատ վայրերում գտնվելուց:
- Ձեռքերի կանոնավոր **լվացումն** ու **ախտահանումը** մարդկանց պաշտպանում է պատահական վարակից:
- Պետք է խուսափել ձեռքսեղմումից՝ որպես ողջույնի ձև: Դրա փոխարեն կարելի է **խոնարհվել** կամ ողջույնի այլ ձևեր կիրառել:
- **Կոնտակտավորների տեղորոշում**: SS միջոցների կիրառմամբ պետք է բացահայտվեն այն անձինք, ովքեր շփվել են վարակակիրների հետ:
- Այն ազգերը, որոնք նախկինում առնչվել էին **համավարակների** հետ, ունեն ավելի ցածր ԶՈՎԻԴ-19 վարակի և մահացության դեպքեր. համավարակների նախկին փորձառությունը նպաստում է ԶՈՎԻԴ-19 հաղթահարման գործընթացին:
- **Անընդհատ, հետևողական և թափանցիկ հանրային հաղորդակցությունը** մեծացնում է կառավարության հանդեպ վստահությունը և նպաստում է համավարակի հաղթահարման կանոնների և կանոնակարգերի պահպանմանը:

- **Նոր Չեչանդիայի** հաջողությունը կարելի է բացատրել մեծածավալ թեսթավորմամբ, տեղորոշմամբ և մեկուսացմամբ, արագ և համապարփակ պլանավորմամբ, միասնականության հռետորաբանությամբ, ինչպես նաև պարզ, հետեւողական և հասկանալի հաղորդակցությամբ:
- Ի հակադրություն Նոր Չեչանդիայի՝ **Ճապոնիայում** թեսթերի քանակը խիստ սահմանափակ էր: Համավարակի հաղթահարման գործընթացում երկիրը հաջողության է հասել շնորհիվ պարզ և հստակ հաղորդակցության, կառավարության, ինչպես նաև հասարակության ունեցած նախկին փորձի (դիմակ կրելն արդեն սովորություն է) և մշակութային այնպիսի տարրերի, ինչպիսիք են հեղինակությունների հանդեպ հարգանքը, կամավորության բարձր մակարդակը, խոնարհումը և անձնական հիգիենան:
- **Հարավային Կորեայում** և կառավարությունը, և հասարակությունը դասեր են քաղել SARS և MERS համավարակների նախկին ցավոտ փորձառությունից: Կառավարությունը մեծապես ապավինում էր SS և Էլեկտրոնային կառավարման գործիքներին՝ բնակչությանը բավականաչափ տեղեկացնելու համար, բացի այդ հասանելի դարձրեց առողջապահական պիտույքները և ծառայությունները Բնակչությունը ծայրաստիճան զգուշավորություն ցուցաբերեց:
- **Սինգապուրի** փորձը շատ նման է Հարավային Կորեայի փորձին նախկին փորձառությունից սովորելու, զարգացած առողջապահական համակարգի, SS տեխնոլոգիաների կիրառության, տեղորոշման և տեղեկացման նպատակով բազմաթիվ ծրագրերի կիրառության տեսանկյունից: Բացի այդ, կիսավտորիատար ռեժիմը լրացուցիչ գործոն է մի կողմից կառավարության վորահսկողության և մյուս կողմից հասարակության կողմից անձնական սահմանափակումների ընդունման տեսանկյունից:
- Ի տարբերություն մյուս չորս երկրների՝ **Վիետնամը** համեմատաբար սահմանափակ ռեսուրսների արդյունավետ կիրառման օրինակ է: Վիետնամի հաջողությունը բացատրվում է նաև նախորդ փորձով, ԱՀԿ-ի հետ սերտ համագործակցությամբ, կառավարության ուժեղ քաղաքականությամբ և համավարակի դեմ «պատերազմի» ագրեսիվ հռետորաբանությամբ:

ԶՈՎԻԴ-19 համավարակ: Տեղեկատվական և վարքաբանական հարցում

- Մարդիկ **բավականաչափ մտահոգ չեն** վիրուսի պատճառով: Հարցվողների միայն 42%-ն է համարում, որ իրենց ԶՈՎԻԴ-ով վարակվելու ռիսկը կամ շատ բարձր է կամ բարձր է: Մոտ 20% չգիտի, թե ռիսկը որքանով է բարձր: **Երիտասարդները ավելի քիչ են հակված մտածելու, որ իրենք հնարավոր է վարակվեն:**
- Մարդիկ ավելի մտահոգ են **վարակվելու**, քան վարակը փոխանցելու համար:
- Հարցվողների մեծ մասը պնդում է, որ դիմակ չկրող մարդկանցից հեռավորություն կպահպանեն, բայց նրանք **չեն ցանկանա կանոնները**

խախտողների վերաբերյալ տեղեկություն տալ կամ նրանց դիտողություն անել:

- Հարցվողների մեծ մասը վստահում է **պաշտոնական նորությունների աղբյուրներին** համավարակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար (Հայկական հեռուստաընկերությունները որպես տեղեկատվության աղբյուր ամենահաճախ են նշվում)
- Կա **սահմանափակումների որոշակի պատրաստակամություն**՝ վարակակիրների թվի մեծացման դեպքում. հարցվողների 48% ավելի շուտ կհամաձայնվի կամ միանշանակ կհամաձայնվի սահմանափակումներին, 37%-ը միանշանակ կամ ավելի շուտ դեմ է նոր սահմանափակումներին:
- Հարցվողների մոտ 30% կարծում է, որ դիմակ չկրելու համար **տուգանքը** պետք է սահմանվի մինչև 5000 ՀՀ դրամ, մյուս 15%-ը կարծում է, որ այն պետք է լինի 6000-10000 ՀՀ դրամի սահմանում: Հարցվողների զգալի մասը (27%) կարծում են, որ դիմակ չկրելու համար տուգանքներ չպետք է լինեն:

Փորձագետների հարցազրույցներ

- Մարդկանց մեծամասնությունը չի պահպանում հակահամաճարակային կանոնները: Այն մարդիկ, ովքեր հետևում են կանոններին, դա անում են հիմնականում **տուգանքներից խուսափելու** համար և ոչ իրենց և մյուսներին պաշտպանելու ներքին դրդապատճառներից ելնելով:
- Հայկական մտածելակերպի որոշակի առանձնահատկությունների պատճառով դիմակ կրելը «**ամոթ**» է համարվում: Ֆատալիզմի զգացողությունը (լինելու բանը լինելու է) նույնպես չի նպաստում, որպեսզի մարդիկ պահպանեն հակահամաճարակային կանոնները:
- Երիտասարդ և **առողջ մարդիկ ավելի քիչ են անհանգստանում հիվանդության պատճառով**՝ մտածելով, որ իրենց հիվանդությունն ավելի թեթև ընթացք կունենա: Չուզորդվելով մյուսներին վարակելու անբավարար անհանգստությամբ՝ այս անհոգ վերաբերմունքը նպաստում է անվտանգության կանոնների ոչ լիարժեք պահպանմանը:
- Կան հստակ պաշտոնական հաղորդակցության և որոշ առաջնորդների օրինակելի վարքաձևի **լավ օրինակներ**, բայց ընդհանուր անկայուն հաղորդագրությունները ստվեր են գցում այս օրինակների վրա:
- Արդյունավետ հանրային հաղորդակցությունը պետք է հաշվի առնի հայ հասարակության բազմազանությունը: Հաղորդագրությունները պետք է ուղղված լինեն կոնկրետ խմբերի և պետք է մատուցվեն տարբեր անձանց կողմից՝ հաշվի առնելով հասարակության տարբեր շերտերում նրանց հանդեպ վերաբերմունքը:
- Հաղորդագրությունները պետք է կարևորեն **մարդկանց ինքնուրույնությունը և մյուսներին պաշտպանելու պատասխանատվությունը** և **անմիջականորեն կապված լինեն**

ցանկալի վերջնարդյունքի հետ. համավարակի ավարտ և նորմալ կյանքին վերադարձի հնարավորություն:

- Անհրաժեշտ է փաստերի վրա հիմնված հաղորդակցություն, որը ներկայացված կլինի պարզ, վիզուալ տեսքով: Բժիշկների և հիվանդների անձնական պատմությունները նույնպես կարող են օգնել հասկանալ համավարակի ծանր մարդկային հետևանքները:

Դիտարկումներ

- Դիտարկված մարդկանց երկու երրորդից ավելին **դիմակ չի կրում կամ կրում է ոչ պատշաճ կերպով:**
- Ընդհանուր առմամբ, պատերազմից հետո դիմակների ճիշտ կրման դեպքերի քանակը պակասել է, բայց կախված վայրից, այն տարբերվում է: Բացօթյա տարածքներում պատերազմից հետո դիմակ կրողների թիվը պակասել է: Միաժամանակ, փակ տարածքներում պատերազմից հետո դիմակ կրողների քանակն ավելացել է:
- Ռազմական վայրերում դիտարկված մարդկանց մեծամասնությունը (մոտ 85%) պատշաճ կերպով չէր կրում դիմակ: Ենթադրվում է, որ հասարակության հուզական վիճակի մակարդակն իր ազդեցությունն ունի նաև այն բանի վրա, թե ինչ ճշտապահությամբ մարդիկ կկրեն դիմակները:

ՀՀ կառավարության հաղորդակցություն

- Համավարակի տարածման սկզբնական փուլում ՀՀ կառավարությունը շեշտը դնում էր յուրաքանչյուր քաղաքացու անձնական պատասխանատվության վրա և մի փոքր սխալվեց՝ խուճապից խուսափելու համար մարդկանց չափազանց շատ հանգստացնելու հարցում: Արդյունքում մարդիկ չգիտակցեցին իրավիճակի լրջությունը, անպատասխանատու վարք ցուցաբերեցին և սահմանափակումների թուլացումից հետո նպաստեցին համավարակի արագ տարածմանը:
- Ամռանը կառավարությունը աստիճանաբար հսկողության տակ առավ համաճարակային իրավիճակը՝ բարելավված հաղորդակցություն և խստացված վերահսկողություն կիրառելով:
- Կառավարության կողմից տրված հաղորդագրությունների մեջ կային որոշակի անխուսափելի անհամապատասխանություններ՝ կապված համավարակի վերաբերյալ գիտելիքների հետ: Սակայն կային նաև անհամապատասխանություններ կառավարության անդամների խոսքի և վարքի միջև, ինչից կարելի էր նաև խուսափել:

Պատվաստում

- Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ պատվաստումներին խանգարում են դավադրության տեսությունները, լրատվամիջոցների բացասական լուսաբանումը և վստահելի տեղեկատվության պակասը:
- Կառավարությունները պետք է նախօրոք ակտիվ լինեն հասարակության վստահության ձևավորման գործում: Կարևոր է տեղեկատվության թափանցիկությունը, օգուտների շեշտադրումը, ինչպես նաև հնարավոր փոքր ռիսկերի վերաբերյալ ազնվությունը:

Ամփոփում և առաջարկություններ

- ՀՀ կառավարությունը և համոզելու (կարևորելով անձնական պատասխանատվությունը), և հարկադրելու քաղաքականություն կիրառեց: Հարկադրանքը արդյունավետ էր մինչև պատերազմի սկիզբը: Ներկայիս հետպատերազմյան իրավիճակում խիստ սահմանափակումները ռիսկային են: ՀՀ կառավարությունը պետք է զգուշորեն համադրի հարկադրանքը և համոզելու կրկնապատիկ ջանքերը:
- Հայկական մշակույթի որոշակի տարրերը (գրկախառնություններ, համբուլյրներ, տոնակատարություններ, անձնական տարածքի բացակայություն) մեծացնում են վարակի տարածման ռիսկը: Այս սովորությունները տրանսֆորմացնելու համար կրեատիվ մոտեցումներ են անհրաժեշտ, որպեսզի բարելավենք ընդհանուր առողջական անվտանգությունը և պատրաստվենք գալիք համավարակներին:
- ՔՈՎԻԴ-19 վերաբերյալ տեղեկատվություն հաղորդողները պետք է լինեն անկուսակցական առողջապահության ոլորտի աշխատակիցներ և գիտնականներ:
- Հեռուստա- և ռադիոհաղորդումների հնարավորությունները կարելի է ավելի արդյունավետ օգտագործել: Կարելի է բժշկական փորձագետներին հրավիրել հաղորդումների, որտեղ նրանք կպատմեն համավարակի երրորդ փուլի ռիսկերի, պատվաստումների արդյունավետության և այլնի մասին: Հատկապես կարևոր է հերքել ՔՈՎԻԴ-19 մասին առասպելներն ու դավադրության տեսությունները:
- Հակահամաճարակային արշավի և պատվաստումների քարոզարշավի համար տարաբնույթ կարծիքի առաջնորդների հավաքագրումը շատ կարևոր է, քանի որ տեղեկատվություն տրամադրող բազմազան թիմը ավելի հավանական է, որ կհասնի հասարակության տարատեսակ շերտերին:
- Պետք է ընդունել, որ համավարակի վերաբերյալ տեղեկատվության փոքր անճշտությունները անխուսափելի են: Համավարակի վերաբերյալ գիտելիքները փոփոխվում են, սխալները անխուսափելի են, առաջարկվող վարքաձևերի վերաբերյալ խորհուրդները կարող են փոփոխությունների ենթարկվել: Մարդիկ պետք է պատրաստ լինեն ընդունել այս փոփոխությունները, բայց միաժամանակ պետք է այս փոփոխությունների տրամաբանությունը բացատրել նրանց:

- Արդյունավետ հանրային հաղորդակցությունը պետք է հաշվի առնի հայ հասարակության բազմազանությունը: Հաղորդագրությունները պետք է ուղղված լինեն կոնկրետ խմբերի և պետք է փոխանցվեն տարբեր խոսակների միջոցով՝ հաշվի առնելով տարբեր խմբերում նրանց վստահելիության մակարդակը:
- Կարելի է հետևել այլ երկրների օրինակին (Նոր Չեխանդիա, Եվրոպական Միություն), որոնք երկրի և առանձին համայնքների համավարակային վիճակը ներկայացնում են պարզ ձևով՝ գույների միջոցով:
- **Ուշադրություն դարձրեք դրական հաղորդագրությունների վրա:** Կենտրոնացեք դիմակ կրելու վրա. գովեք մարդկանց, շնորհակալություն հայտնեք նրանց:
- **Թիրախավորեք երիտասարդներին:** Նրանք վստահ են, որ չեն վարակվի և անգամ վարակվելու դեպքում իրենց հիվանդությունը ծանր ընթացք չի ունենա: Նրանք պետք է հասկանան, որ շատ հավանական է, որ իրենք հիվանդությունները փոխանցող կհանդիսանան:
- Պետք է բացատրել մարդկանց, որ հակահամաճարակային կանոնների պահպանումը հիվանդանալու հավանականությունը պակասեցնում է, բայց լիովին չի վերացնում:
- Տույց տվեք, որ բժիշկները հոգևած են և օգնության կարիք ունեն: Հուզականորեն ներկայացրեք, թե համավարակն ինչպես է ազդում իրենց հոգեկան և առողջական վիճակի վրա: Համադրեք ռացիոնալ (նկարներ, վիճակագրություն) պատկերը հուզական պատկերի հետ:
- **Խոսեք կորստի մասին:** Ընտանիքների թույլտվությամբ պատմեք իրական մարդկանց պատմությունները, ովքեր մահացել են ԶՈՎԻԴ-19 պատճառով: Երբեք մի մեղադրեք կամ պիտակավորեք որևէ մեկին, բայց ցույց տվեք, թե վիրուսն ինչ սարսափելի հետևանքներ կարող է ունենալ: Կարելի է ստեղծել ԶՈՎԻԴ-19 զոհերի հիշատակի առցանց կամ իրական հարթակ:
- Տրամադրեք իմունիտետի վերաբերյալ ամենաթարմ տեղեկատվությունը: Եթե դուք մեկ անգամ վարակվել եք ԶՈՎԻԴ-19-ով, հնարավոր է, որ կրկին կվարակվեք: Նաև պարզ չէ, թե արդյոք արդեն վարակված անձինք կարող են վարակը փոխանցողներ հանդիսանալ թե ոչ: Բոլորը պետք է շարունակեն զգուշավորություն պահպանել:
- **Հնարավորինս պատկերավոր կերպով ներկայացրեք իրավիճակը:**
- Ստեղծեք պատվաստման վերաբերյալ քննարկումների հարթակ: Դա կարող է լինել որևէ կայք կամ էջ սոցիալական ցանցում: Պատրաստ եղեք պատվաստանյութերի հանդեպ հասարակության դիմադրությանը: Պատվաստմանը միանշանակ դեմ մարդկանց դժվար կլինի համոզել: Մարդկանց մի մասը վստահում է ռուսական պատվաստանյութին, մյուսները վստահում են «Արևմտյան» պատվաստանյութին. Եթե հնարավոր է, մի քանի տեսակի պատվաստանյութի ընտրություն առաջարկեք:
- Փոքր, սիմվոլիկ նվերներ տվեք այն մարդկանց, ովքեր պատվաստվում են: